Digitally signed by
VRTANESYAN ARAM 2002800081
Date: 29.06.2023 18:19:14

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 05-06-2023 թ. որոշմամբ
««ՆՈՐՔ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2022 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		««ՆՈՐՔ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ Կ. ՈՒԼՆԵՅԻ 68
1.3 Պետական գրանցման համարը		222.160.47002
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2011-09-26
1.5 ՀՎՀՀ-ն		02602449
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)11501806
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		https://nork.am/
1.8 Էլեկտրոնային փոստը		norq.@norq.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Անահիտ Պարզյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	70	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման), շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր	311,219,600
	Ջերմային էներգիայի ծախսի փոխհատուցում	2,331,485

	ԵԱՏՄ աշխատանքի փնտրման հարթակ	5,609,000
	Անձի ֆունկցիոնալության գնահատման հարթակ	150,030,700
	ՏՏ պահանջների վերլուծության ծառայություն	2,833,315
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Անձի ֆունկցիոնալության գնահատման հարթակ	8,180,000
	Անձի ֆունկցիոնալության գնահատման հարթակ	2,853,945
	Անձի ֆունկցիոնալության գնահատման հարթակ	9,643,732
	Տեղեկատվության տրամադրում	134,791,734
	Տեխնիկական սպասարկման աշխատանքների իրականացում	440,000
	Ֆինանսաբանկային գործառույթներից	676,912
	ԵԱՏՄ Աշխատանքի փնտրման հարթակ	121,107,000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկում (կատարելագործում,	192,062,300	
Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի շահագործում	66,126,500	
Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի տեղեկատվության տրամադրում	53,030,800	
Ջերմային էներգիայի ծախսի փոխհատուցում	2,331,485	
Աշխատանքի Էլեկտրոնային բորսա	5,419,191	
Ի-Դիսքբիլիթի	77,072,664	
Տեղեկատվության տրամադրում	134,791,734	
Անձի ֆունկցիոնալության գնահատման հարթակ	20,677,677	

SS պահանջների վերլուծության ծառայություն	2,833,315
Աշխատանքի Էլեկտրոնային բորսա	14,807,286
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	749,717,423
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	569,152,952

Նշումներ՝

8.1.1 3-րդ տողում ՀՀ կառավարության կողմից փոխանցվել է 5609000 ՀՀ դրամ,որից 2022թ.-ին ծախսվել է 5419191 ՀՀ դրամ,իսկ 189809 ՀՀ դրամ տարբերությունը ետ է փոխանցվել ՀՀ բյուջե: 8.1.2 12-րդ տողում լրացված է Եվրասիական զարգացման բանկի կողմից փոխանցված 121107000 ՀՀ դրամ,որից 2022թ.-ին ծախսվել է 14955553 ՀՀ դրամ,մնացած գումարը որպես մնացորդ պահպանվել է հաշվարկային հաշվի վրա:

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 25 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

«ՆՈՐՔ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Բովանդակություն

3 Անկախ աուդիտորական եզրակացություն

6 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

7 Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

8 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

9 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2022թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:
Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Հիմնադրամի 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների:
Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ՖՀՄՍ-ների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե

ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք: Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:
  Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները՝ ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Աուդիտ Արմենիա» ՓԲԸ
13 ապրիլի, 2023թ.
Ք. Երևան

Աննա Ավետիսյան

Տնօրեն-Բաժնետեր
Աուդիտի ղեկավար

«ԱՈՒԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ»
«AUDIT ARMENIA»
«АУДИТ АРМЕНИЯ»
01569467

«ՆՈՐՔ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

Հազար դրամ	Ծանոթ.	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	37,477	40,816
Ոչ նյութական ակտիվներ	5	330	447
Հետաձգված հարկային ակտիվներ	6	14,043	13,645
		51,850	54,908
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	7	16,855	12,602
Դեբիտորական պարտքեր	8	21,077	18,642
Դեբիտորական պարտքեր շահութահարկի գծով		-	6,308
Դրամական միջոցներ	9	98,997	42,874
		136,929	80,426
Ընդամենը ակտիվներ		188,779	135,334
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	10	-	352
		-	352
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամուտներին վերաբերող շնորհներ	10	-	-
Կրեդիտորական պարտքեր	11	87,559	46,143
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		-	-
		87,559	46,143
Զուտ ակտիվներ	12	101,220	88,839
		101,220	88,839
Ընդամենը պարտավորություններ		188,779	135,334

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 2023թ. ապրիլի 13-ին՝

Գործադիր տնօրեն

Անահիտ Պարզյան

Գլխավոր հաշվապահ

Խոսրովանուշ Հակոբյան

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Հազար դրամ

	Ծանոթ.	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	13	501,376	374,583
Շնորհից եկամուտ/ ծախս	14	3,197	6,792
Այլ եկամուտ	15	40,862	502
Մատուցված ծառայությունների ինքնարժեք		(377,639)	(289,844)
Աշխատակիցներին հատուցումներ		(133,923)	(113,298)
Մաշվածություն		(2,524)	(9,088)
Այլ ծախսեր	16	(19,838)	(43,245)
Ֆինանսական եկամուտ	17	677	2,682
Այլ ֆինանսական հոդվածներ	18	(205)	(493)
Գործառնական գործունեությունից արդյունք		11,983	(71,409)
Շահութահարկի գծով ծախս	19	398	10,808
Տարվա արդյունք		12,381	(60,601)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		12,381	(60,601)

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

«ՆՈՐՔ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՋԵԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2021թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք	12,381	(60,601)
Ճշգրտումներ		
Մաշվածություն և ամորտիզացիա	*9,263*	9,088
Հիմնական միջոցների լուծարումից ծախս	-	1,545
Շահութահարկի գծով եկամուտ (ծախս)	*(398)*	(10,808)
Տոկոսային եկամուտ	*(677)*	(2,682)
Շնորհից եկամուտ	*(3,197)*	(6,792)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ /վնաս	*205*	493
Գործառնական շահույթ/վնաս նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	17,577	(69,757)
Դեբիտորական պարտքերի փոփոխություն	(2,435)	(1,356)
Պաշարների փոփոխություն	(4,253)	(3,265)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	41,416	20,956
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	52,305	(53,422)
Վճարված տոկոսներ	-	
Վճարված շահութահարկ	6,308	(22,475)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	58,613	(75,897)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	(5,807)	(21,621)
Հիմնական միջոցների և *ոչ նյութական ակտիվների* ձեռքբերում		
Ստացված տոկոս	677	2,682
Շնորհի ստացում	2,845	5,461
Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	(2,285)	(13,478)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահաբաժին	-	-
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	-	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/նվազում	56,328	(89,375)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(205)	(493)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	42,874	132,742
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	98,997	42,874

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» Հիմնադրամը (այսուհետ Հիմնադրամ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2011թ. սեպտեմբերի 26-ին, գրանցման համար՝ 222.160.47002:

Հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմինը և Հիմնադրամի գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է՝ բաղկացած 9 անդամներից, որոնցից 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գործողը՝ 8 անդամ:

Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր տնօրենը: Հիմնադրամի գործադիր տնօրենն է Անահիտ Պարզյանը:

Հոգաբարձուների խորհրդի անդամներն են՝

Անդամներ	Պաշտոն
Նարեկ Մկրտչյան	Խորհրդի նախագահ/ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Տաթևիկ Ստեփանյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Աննա Ժամակոչյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ռուբեն Սարգսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Դավիթ Խաչատրյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Էդուարդ Պետրոսյան	Միասնական Սոցիալական Ծառայության պետ
Դավիթ Սահակյան	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ
Ստեփան Ծատուրյան	«Հյումանայզ Սերվիսիս» ՍՊԸ գլխավոր տնօրեն

Հիմնադրամի նպատակներն են.

- Սոցիալական ապահովության բնագավառի տեղեկատվական ենթակառուցվածքի բնականոն գործունեությունը և շարունակական արդիականացումն ու կատարելագործումը, այս նպատակով մասնավոր և պետական հատվածների արդյունավետ համագործակցությունն ապահովելը.
- Սոցիալական ապահովության բնագավառում էլեկտրոնային սոցիալական ծառայությունների ներդրումը և այդ ծառայությունների շրջանակի ընդլայնումը (այդ թվում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ), այս նպատակով մասնավոր և պետական հատվածների արդյունավետ համագործակցությունն ապահովելը.
- Սոցիալական ապահովության բնագավառի և կուտակային կենսաթոշակային համակարգի վերաբերյալ հանրային իրազեկվածության և հանրային կրթության մակարդակի բարձրացումը, այս նպատակով մասնավոր և պետական հատվածների արդյունավետ համագործակցությունն ապահովելը.
- Հայաստանի Հանրապետությունում սոցիալական ապահովության բնագավառում կիրառվող տեխնոլոգիական լուծումների արտահանումը.
- Սոցիալական պաշտպանության ոլորտի բարեփոխումներին աջակցելը.
- Սոցիալական ապահովության բնագավառում կիրառվող տեխնոլոգիական լուծումների միջազգային փորձի ուսումնասիրությունը և տեղայնացումը.

2022թ. Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 78 մարդ (2021թ.՝ 73 մարդ):

Հիմնադրամի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կ.Ուլնեցի/ 68 Քանաքեռ-Զեյթուն:

2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրած հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ստորև: Դրանք կիրառվել են ներկայացված ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Հիմնադրամի գործառնական արժույթը:

Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ) պահանջներին համապատասխան:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիման վրա:

Անընդհատության սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

Դատողությունների, գնահատումների և ենթադրությունների օգտագործում

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պատրաստելու համար Հիմնադրամի ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների և ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ("ՀՀ ԿԲ") կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքը.

Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքները.

	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱՄՆ դոլար	393.57	480.14
Եվրո	420.06	542.61

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Մեքենաներ և սարքավորումներ	2-20 տարի
Տրանսպորտային միջոցներ	5-10 տարի
Արտադրական, տնտեսական գույք	2-20 տարի
Համակարգչային տեխնիկա	1-9 տարի
Այլ հիմնական միջոցներ	2-10 տարի:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվներ են լիցենզիաները և թույլտվությունները, որոնք ներկայացվում են սկզբնական արժեքով՝հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները: Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:
Եթե առկա է որևէ հայտանիշ, որ տեղի են ունեցել ամորտիզացիայի հաշվարկման դրույքաչափերի, ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի նշանակալի փոփոխություններ, ապա ամորտիզացիան վերանայվում է առաջընթաց կերպով՝ նոր ակնկալիքներն արտացոլելու նպատակով:
Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

3.4 Ակտիվների արժեզրկում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե

նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեն: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.5 Վարձակալություն

Կազմակերպությունը, որպես վարձակալ, մեկնարկի ամսաթվի դրությամբ ճանաչում է օգտագործման իրավունքով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն, բացառությամբ փոքրարժեք ակտիվների և վարձակալության գծով կարճաժամկետ պարտավորությունների, համաձայն ՖՀՄՍ 16-ի:

Սկզբնական ճանաչում

Վարձակալության մեկնարկի ամսաթվին Կազմակերպությունը չափում է օգտագործման իրավունքով ակտիվը սկզբնական արժեքով, որը ներառում է.

- վարձակալության պարտավորության գծով սկզբնական չափման գումարը,
- վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ,
- վարձակալի կողմից կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ,և
- այն ծախսումների գնահատականը, որը վարձակալը կկրի հիմքում ընկած ակտիվը ապամոնտաժելիս կամ քանդելիս, ինչպես նաև այդ ակտիվի զբաղեցրած տեղանքը վերականգնելիս կամ հիմքում ընկած ակտիվը վերականգնելիս՝ բերելով այն վիճակի, որը պահանջվում է վարձակալության պայմանագրի ժամկետներով և պայմաններով:

Վարձակալության մեկնարկի ամսաթվին Կազմակերպությունը պետք է չափի վարձակալության գծով պարտավորությունը՝ այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք դեռևս չեն վճարվում այդ ամսաթվին: Վարձավճարները պետք է զեղչվեն՝ կիրառելով Կազմակերպության վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել: Եթե այդ դրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, Կազմակերպությունը պետք է կիրառի վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Հետագա չափում

Սկզբնական արժեքի մոդել կիրառելիս կազմակերպությունը պետք է չափի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնական արժեքով՝

- հանած՝ կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները և
- ճշգրտված՝ վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափմամբ:

Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալը վարձակալության գծով պարտավորությունը պետք է չափի՝

- ավելացնելով հաշվեկշռային արժեքը՝ վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար,
- նվազեցնելով հաշվեկշռային արժեքը՝ կատարված վարձավճարները արտացոլելու համար, և
- վերաչափելով հաշվեկշռային արժեքը՝ ցանկացած վերանայում կամ վարձակալության վերափոխում, կամ վերանայված հաստատուն վարձավճարները արտացոլելու համար:

3.6 Կանխավճարներ

Կանխավճարները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկման համար պահուստը: Կանխավճարները դասակարգվում են որպես ոչ ընթացիկ, երբ կանխավճարին վերաբերող ապրանքներն ու ծառայություններն ակնկալվում է ստանալ մեկ տարի հետո կամ երբ կանխավճարը վերաբերում է այնպիսի ակտիվի, որը սկզբնական ճանաչման ժամանակ կդասակարգվի որպես ոչ ընթացիկ: Ակտիվներ

ձեռք բերելու գծով կանխավճարները փոխանցվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ Կազմակերպությունը ստանում է ակտիվի նկատմամբ վերահսկողություն և հավանական է, որ ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Կազմակերպություն: Այլ կանխավճարները ծախսագրվում են շահույթի կամ վնասի կազմում, երբ կանխավճարի հետ կապված ապրանքը կամ ծառայությունը ստացվում է: Եթե կա այնպիսի հայտանիշ, որ կանխավճարին վերաբերող ակտիվները, ապրանքները կամ ծառայությունները չեն ստացվի, ապա կանխավճարի հաշվեկշռային արժեքը համապատասխանաբար դուրս է գրվում և արժեզրկումից կորուստը ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում:

3.7 Պաշարներ

Սկզբնական ճանաչման պահին պաշարները չափվում են սկզբնական արժեքով (ինքնարժեքով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:
Ձեռքբերման ծախսումներն են ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը և հարկերը (բացառությամբ նրանց, որոնք հարկային մարմինների կողմից ենթակա են կազմակերպությանը ետ վերադարձման), ինչպես նաև տրանսպորտային, բեռնման, բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են ապրանքների, նյութերի և ծառայությունների ձեռքբերման հետ: Ձեռքբերման ծախսումները որոշելիս առևտրային զեղչերը, գների իջեցումները և նմանատիպ այլ հոդվածներ հանվում են:
Վերամշակման ծախսումները ներառում են արտադրանքի վերամշակման հետ ուղղակիորեն կապված ծախսումները, ինչպիսիք են աշխատուժի գծով ուղղակի ծախսումները, պատրաստի արտադրանքի վրա պարբերաբար բաշխվող հաստատուն և փոփոխուն արտադրական վերադիր ծախսումները, որոնք կատարվում են վերամշակելու ընթացքում:
Այլ ծախսումները ինքնարժեքում ներառվում են այն չափով, ինչքանով դրանք կատարվել են պաշարները ներկա գտնվելու վայր և պատշաճ վիճակի բերելու համար:

Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ նախագծերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը հաշվարկվում է կոնկրետ արտադրանքի ինքնարժեքի որոշման ճանապարհով:
Փոխադարձ փոխարինելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է «Առաջինը Մուտք՝ Առաջինը Ելք» (ԱՄԱԵ) մեթոդով:

Պաշարների ինքնարժեքի մեջ չեն ներառվում գերնորմատիվային ծախսումները, պահպանման ծախսումները, վարչական վերադիր ծախսումները և վաճառքի ծախսումները:

Պաշարները հետագայում չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքի ցանկացած իջեցման գումար մինչև իրացման զուտ արժեք և պաշարների բոլոր կորուստները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ դրանք տեղի են ունեցել:

Ոչ իրացվելի պաշարները դուրս են գրվում իրենց հաշվեկշռային արժեքով:

3.8 Շնորհներ

Շնորհները, ներառյալ ոչ դրամային շնորհները՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են իրական արժեքով որպես հետաձգված եկամուտ:
Շնորհը ճանաչվում է որպես եկամուտ՝ սիստեմատիկ եւ ռացիոնալ հիմունքով, ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերմանը վերաբերող շնորհները ներառվում են ոչ ընթացիկ պարտավորություններում եւ ճանաչվում են որպես եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

3.9 Հատուցումներ աշխատակիցներին

Աշխատակիցների հատուցումները աշխատակիցների, ներառյալ տնօրենները և կառավարչական անձնակազմը, մատուցած ծառայության դիմաց Հիմնադրամի կողմից ցանկացած ձևով տրվող փոխհատուցումներն են: Աշխատակիցների հատուցումներն են.

ա) աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի ազատման նպաստներից), որոնք ամբողջությամբ մարվում են այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցում են համապատասխան ծառայությունը.

բ) հետաշխատանքային հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի ազատման նպաստներից), որոնք ենթակա են վճարման աշխատանքային գործունեությունն ավարտելուց հետո.

գ) աշխատակիցների այլ երկարաժամկետ հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի հետաշխատանքային հատուցումներից և ազատման նպաստներից), որոնք ոչ ամբողջությամբ են մարվում այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցում են համապատասխան ծառայությունը.

դ) ազատման նպաստներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են, որոնք ենթակա են վճարման որպես հետևանք կամ՝

- Հիմնադրամի որոշման՝ աշխատանքից ազատել աշխատակիցներին մինչև թոշակի անցնելու ընդունված ժամկետը, կամ
- աշխատակցի որոշման՝ աշխատակիցների թվաքանակի կրճատման դեպքում կամավոր ազատվել՝ փոխարենը ստանալով այդ նպաստները:

3.10 Շահութահարկ

Շահութահարկը ներկայացվում է ֆինանսական հաշվետվություններում համաձայն օրենսդրության, որն, ըստ էության, գործում է կամ ուժի մեջ է մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից և ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում:

Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել կամ ստանալ տարվա հարկվող եկամտի կամ վնասի գծով՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկ չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ բիզնեսի միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում, որն ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական և ո՛չ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված արձակուրդային պահուստների և դեբիտորական պարտքերի պահուստների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Կազմակերպությունն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթը որոշվում է հարկվող ժամանակավոր տարբերությունների մարումից առաջացող գումարի հիման վրա: Եթե հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ ճանաչելու համար, դիտարկվում է գոյություն ունեցող ժամանակավոր տարբերությունների մարումներով ճշգրտված ապագա հարկվող շահույթը, որը որոշվում

է Հիմնադրամի գործարար ծրագրերի հիման վրա: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի: Այս նվազեցումները հակադարձվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթի առկայության հավանականությունը: Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերագնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում են այն չափով, որով հավանական է, որ Կազմակերպությունն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող է դրանք օգտագործվել:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Կազմակերպությունը տվյալ պահին ունի ունի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվներ զուտ հիմունքով, կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները:

3.11 Հասույթ

Հիմնադրամը հասույթը պետք է չափի ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքը հաշվի է առնում Հիմնադրամի կողմից տրամադրվող ցանկացած առևտրական զեղչերի, ժամկետից շուտ վճարման զեղչերի և քանակային զիջումների գումարները:

Հիմնադրամը ապրանքների վաճառքից ստացվող հասույթը պետք է ճանաչի, երբ բավարարվում են հետևյալ բոլոր պայմանները՝

ա) Հիմնադրամը գնորդին է փոխանցել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը.
բ) Հիմնադրամը չի պահպանում ոչ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, և ոչ էլ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն.
գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.
դ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Հիմնադրամ.
ե) գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել:
Հիմնադրամի հասույթը առաջանում է ծառայությունների մատուցումից:

3.12 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալի ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և սկզբնական չափում

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- փոխառություններ և դեբիտորական պարտքեր:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե ուղղակիորեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են "Ֆինանսական ծախս", "Ֆինանսական եկամուտ" կամ "Այլ ֆինանսական արդյունքներ" հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է "Այլ ծախսեր" հոդվածում:

I. Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ այն ֆինանսական ակտիվները, որոնք որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգվել են Հիմնադրամի կողմից՝ սկզբնական ճանաչման ժամանակ: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում:

Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հիմնված է իրական արժեքի փոփոխության վրա, որը որոշվում է՝ ուղղակիորեն վկայակոչելով գործող շուկայում գործարքները կամ գործող շուկայի բացակայության դեպքում՝ գնահատման մեթոդի միջոցով:

II. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ուղղակիորեն ճանաչելով այլ համապարփակ արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր այլ համապարփակ արդյունքներում, փոխանցվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Սեփական կապիտալի գործիքներից առաջացած և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված վնասները չեն հակադարձվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում: Նախորդ ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված պարտքային արժեթղթերի արժեզրկումից առաջացած վնասները հակադարձվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին

հաշվետվությունում, եթե հետագա աճը հիմնվում է այն դեպքի վրա, որը տեղի է ունեցել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արժեզրկումից վնասի ճանաչումից հետո:

III. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Հիմնադրամը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

IV. Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգում և սկզբնական չափում

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

I. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

4. Հիմնական միջոցներ

հազար դրամ	Մեքենաներ և սարքավորումներ, համակարգչային տեխնիկա	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական, տնտեսական գույք	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	72,027	30,356	20,114	122,497
Ավելացում, կապիտալացում	-	-	21,621	21,621
Ներքին շարժ	15,892	-	(15,892)	-
Օտարում	(2,443)	(2,997)	(1,508)	(6,948)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	85,476	27,359	24,335	137,170
Ավելացում, կապիտալացում	3,896	-	1,551	5,447
Օտարում, դուրսգրում	-	-	-	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	89,372	27,359	25,886	142,617
Կուտակված մաշվածություն				
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	64,832	17,337	10,793	92,962
Տարվա ծախս	3,978	2,303	2,514	8,795
Օտարում	(2,269)	(2,101)	(1,033)	(5,403)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	66,541	17,539	12,274	96,354
Տարվա ծախս	3,937	2,172	2,677	8,786
Օտարում	-	-	-	-
2022թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	70,478	19,711	14,951	105,140
Հաշվեկշռային արժեք				
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	18,935	9,820	12,061	40,816
2022թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	18,894	7,648	10,935	37,477

Մաշվածության գծով ծախսը 2022թ. կազմել է 8,786 հազ. դրամ (2021թ. 8,786 դրամ):

5. Ոչ նյութական ակտիվներ

հազար դրամ	Firmային անուններ	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ և այլն	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	19	1,761	10	1,790
Ավելացում	-	-	-	-
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19	1,761	10	1,790
Ավելացում	-	360	-	360
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19	2,121	10	2,150
Կուտակված մաշվածություն				
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	8	1,036	6	1,050
Տարվա ծախս	11	276	6	293
Ներքին շարժ	-	2	(2)	-

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19	1,314	10	1,343
Տարվա ծախս	-	477	-	477
Օտարում	-	-	-	-
2022թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	19	1,791	10	1,820
Հաշվեկշռային արժեք				
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	447	-	447
2022թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	330	-	330

6. Հետաձգված հարկային ակտիվներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	13,645	2,837
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված փոխհատուցում/ծախս	398	10,808
Տարեվերջի մնացորդ	14,043	13,645

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	2022թ. Հունվարի 1	ճանաչված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	2022թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ			
Արձակուրդի պահուստ	3,509	1,821	5,330
Դեբիտորական պարտքերի պահուստ	1,058	142	1,200
Նախորդ տարվա հարկային վնասի ճշգրտում	-	(2,038)	(2,038)
Հարկային վնաս	9,078	473	9,551
Զուտ արդյունք հետաձգված հարկային ակտիվներ	13,645	398	14,043
Հետաձգված հարկային պարտավորություն	-	-	-
Զուտ արդյունք	13,645	398	14,043

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	2021թ. Հունվարի 1	ճանաչված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	2021թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ			
Արձակուրդի պահուստ	1,313	2,196	3,509
Դեբիտորական պարտքերի պահուստ	1,524	(466)	1,058
Հարկային վնաս	-	9,078	9,078

Զուտ արդյունք հետաձգված հարկային ակտիվներ	2,837	10,808	13,645
Հետաձգված հարկային պարտավորություն	-	-	-
Զուտ արդյունք	2,837	10,808	13,645

7. Պաշարներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Նյութեր	16,430	12,468
Վառելիք	401	119
Շինանյութ	-	-
Այլ նյութեր	24	15
	16,855	12,602

8. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	22,039	19,323
Տրված կանխավճարներ	-	3,303
Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ	(6,668)	(5,877)
Այլ	1,498	304
	16,869	17,053
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	4,208	1,589
	21,077	18,642

9. Դրամական միջոցներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկղ	-	-
Բանկային հաշիվներ /դրամային/	98,997	38239
Բանկային հաշիվներ /արտարժութային/	-	4,635
	98,997	42,874

10. Ակտիվներին և եկամուտներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	352	1,683
Ստացված ՀՄ-ի մասով (զուտ)	(352)	(1,169)
Ստացված դրամական միջոցի մասով (զուտ)		(162)
Տարեվերջի մնացորդ	-	352

11. Կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,486	5,448
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	41,062	20,386
Աշխատավարձի գծով պարտք	15,394	812
Արձակուրդի պահուստ	29,614	19,497
Այլ	3	
	87,559	46,143

12. Զուտ ակտիվներ

Հազար դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	149,440	149,440
Տարվա արդյունք	(60,601)	(60,601)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	88,839	88,839
Տարվա արդյունք	12,381	12,381
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	101,220	101,220

13. Հասույթ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ծառայությունների մատուցումից հասույթ	384,375	262,505
Ֆինանսական կազմակերպություններին ծառայությունների մատուցումից հասույթ	114,348	109,454
Այլ	2,653	2,624
	501,376	374,583

14. Եկամուտ շնորհներից

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներին վերաբերող շնորհներից	352	1,169
Եկամուտներին վերաբերող շնորհներից	2,845	5,623
	3,197	6,792

15. Այլ եկամուտներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Էլ,Բորսայի անխափան աշխատանքի կազմակերպում	20,355	-
ՄԱԿ-ի զարգացման ծրագիր	9,644	-
SS պահանջների վերլուծության ծառայություն	2,572	-
Այլ	8,291	502
	40,862	502

16. Այլ ծախսեր

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գրասենյակային ծախս	1,027	5,163
Փոստի և հեռահաղորդակցության	2,086	335
Բանկային և ապահովագրության	50	107
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	1,546	600
Վերանորգման ծախս	453	9,167
Արձակուրդի պահուստի ծախս	10,118	19,488
ՀՄ օտարման ծախս	-	1,545
Չփոխհատուցվող հարկերից ծախս	289	197
Այլ ծախսեր	4,269	6,643
	19,838	43,245

17. Ֆինանսական եկամուտ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տոկոսների եկամուտ	677	2,682
Ֆինանսական եկամուտ, զուտ	677	2,682

18. Այլ ֆինանսական եկամուտ/ծախս

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը		
Դրամական միջոցներ	(205)	(493)
	(205)	(493)

19. Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	-	-
Հետաձգված հարկ	(398)	(10,808)
	(398)	(10,808)

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	11,983		(71,409)	
Շահութահարկ 18% (2021թ. 18 տոկոս)	2,157	18.00	(12,854)	(18.00)
Չնվազեցվող ծախսեր	(2,555)	(21.32)	2,046	3
Շահութահարկի գծով ծախս	(398)	(3.32)	(10,808)	(15.14)

20. Ֆինանսական գործիքներ

20.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.12-ում:

20.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր		
Առևտրային դեբիտորական պարտքեր	15,371	13,446
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	98,997	42,874
	114,368	56,320

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,486	25,757
	1,486	25,757

21. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Հիմնադրամը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժութային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

21.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Հիմնադրամի գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է արտարժութային, տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին (տես՝ բ) ստորև):

բ) Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում նաև արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Հիմնադրամի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունը կարող է առաջանալ Հիմնադրամի ստացված շնորհներից, դեբիտորական և կրեդիտորական պարտքերից:

գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը ֆինանսական կորուստներ կարող է կրել:

Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

դ) Իրացվելիության ռիսկ

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

22. Պայմանական պարտավորություններ

22.1 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Տնտեսական անբարենպաստ պայմանները և ներդրումների ցածր մակարդակը բացատրվում են նաև 2020թ.-ին Արցախի Հանրապետությունում տեղի ունեցած ռազմական բախումներով և դրանց հաջորդած հրադադարի ռեժիմի պայմանագրերով, ներքաղաքական անկայուն վիճակով և իհարկե նույն տարում ամբողջ աշխարհը ցնցած Չինաստանում բռնկված կորոնավիրուս (COVID-19) համավարակով՝ պետությունների կառավարությունների կողմից սահմանված կրկնակի արգելափակումներով:

2020թ.ի մարտի 11-ին Առողջապահության Համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) հայտարարեց, որ կորոնավիրուսի տարածումը կարող է բնութագրվել որպես համավարակ: Վիրուսը զգալի ազդեցություն է ունեցել համաշխարհային տնտեսության վրա: Կազմակերպություններն առնչվեցին կորցրած եկամուտների և խափանված մատակարարման շղթաների խնդիրների հետ: Չնայած նրան, որ որոշ երկրներ փորձեցին մեղմացնել սահմանափակումները՝ մեղմացումները աստիճանական են եղել, և կազմակերպությունների գործունեության ընդհատման արդյունքում միլիոնավոր աշխատակիցներ կորցրեցին իրենց աշխատանքը: Համավարակը զգալի անկայունության հանգեցրեց ամբողջ աշխարհի ֆինանսական և ապրանքային շուկաները:
Հայաստանի Հանրապետության կառավարությունը և կենտրոնական բանկը տնտեսության վրա կորոնավիրուսի ազդեցությունը մեղմացնելու նպատակով իրականացնում են շարունակական միջոցառումներ: Ի թիվս այլ միջոցառումների, վերջիններս ներառում են նաև տուժած ճյուղերի և անհատների փոխառությունների սուբսիդավորում և վարկային «արձակուրդներ»:
Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա կարող են տարբերվել Հիմնադրամի ղեկավարության ներկա սպասումներից:

Հիմնադրամի ղեկավարությունը գտնում է, որ իրացվելիության ընթացիկ մակարդակը բավարար է կայուն գործունեության համար: Հիմնադրամը պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:
Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա:

22.2 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա փուլում ապահովագրության շատ տեսակներ զարգացման սկզբնական փուլում են և լայնորեն չեն կիրառվում: Սա է պատճառը, որ Հիմնադրամն ապահովագրված չէ գործունեության ընդհատման, ակտիվների կորստի կամ այլ անձանց կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով վնասներ կրելու իրադարձություններից: Քանի դեռ Հիմնադրամն ապահովագրված չէ համապատասխան ռիսկերից, առկա է ակտիվների կորստի կամ ոչնչացման վտանգ, ինչը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ նրա գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Բացառություն են կազմում սեփականատերերի կողմից ավտոմեքենաների

պարտադիր ապահովագրությունները, որոնք հատուցում են վթարի դեպքում երկրորդ կողմին պատճառված վնասները:

22.3 Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ պահանջում է մեկնաբանություններ: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են վերանայման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

22.4 Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

2022թ. Ուկրաինական հակամարտությունը շատ արագ տարածվեց, ինչը մեծ ազդեցություն ունի և դեռևս կունենա ամբողջ աշխարհի վրա:
Ռուբլու արժեզրկումը ռուբլով արտահայտված դրամական փոխանցումների վրա էական ազդեցություն չի ունենա: Փոխարենը դա կազդի այդ փոխանցումների դոլարային արտահայտության վրա: Բնականաբար ԱՄՆ դոլարով արտահայտված դրամական փոխանցումները որոշակիորեն կնվազեն: Պատմականորեն ՀՀ տնտեսությունը մի քանի անգամ բախվել է նման ցնցումների հետ: Ի տարբերություն նախորդ ժամանակների, ներկայումս Հայաստանի տնտեսությունը շատ ավելի քիչ է կախված դրամական փոխանցումների ծավալներից, իսկ ՌԴ կշիռը այդ դրամական փոխանցումներում զգալիորեն ավելի փոքր է: Կարծում ենք, որ դրամական փոխանցումների որոշակի կրճատումը բացասական կազդի ՀՀ ներքին պահանջարկի վրա, սակայն այդ ազդեցությունը գնահատում ենք ոչ շատ մեծ:
Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա կարող են տարբերվել Հիմնադրամի ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա:

22.5 Դատական գործեր

2022թ. դեկտեմբերի 31-ի և սույն ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթվի դրությամբ Հիմնադրամի դեմ հարուցված դատական հայցեր չկան:

23 Գործարքներ կապակցված կողմերի միջև

23.1 Վերահսկողություն

Հիմնադրամը վերահսկվում է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից:

Հիմնադրամի գործադիր տնօրենն է Անահիտ Պարզյանը:

1. Առանցքային կառավարչական անձնակազմին փոխհատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմը ներառում է այն անձանց, ովքեր իրավասու են և պատասխանատվություն են կրում Հիմնադրամի գործունեության պլանավորման, կառավարման և վերահսկողության իրականացման համար: Հիմնադրամի կառավարչական անձնակազմը Գլխավոր տնօրենն է:

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	25,905	32,655

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 59

ՀՀ «ՆՈՐՔ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

1. Ամսաթիվը և վայրը՝ 2023թ. հունիս 5, ք. Երևան

Նիստը անցկացվել է առցանց հարցման կարգով:

2. Խորհրդի նիստին մասնակցել են խորհրդի ընտրված ինը անդամներից վեցը՝

Նարեկ Մկրտչյան	Հոգաբարձուների խորհրդի նախագահ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Տաթևիկ Ստեփանյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Աննա Ժամակոչյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Դավիթ Խաչատրյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ներսես Երիցյան	«Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի գործադիր տնօրեն
Ստեփան Ծատուրյան	«Հյումանայզ Սերվիսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գլխավոր տնօրեն

Ինչպես նաև հրավիրված անձինք՝

Անահիտ Պարզյան	«Նորք» տեխնոլոգիաների կենտրոնի գործադիր տնօրեն
Արմինե Օհանյան	Նիստի քարտուղար

3. Օրակարգ՝

3.1 Հոգաբարձուների խորհրդի 2023թ. հունիսի 5-ի նիստի օրակարգի հաստատում:

3.2 ՀՀ «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի 2022 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունը հաստատելու և Աուդիտի դրական եզրակացությունը ի գիտություն ընդունելու հարցը:

4. Նիստի ընթացքը

4.1 Առցանց քննարկման դրվեց օրակարգի *առաջին հարցը:*

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ այլ առաջարկություններ և առարկություններ չներկայացվեցին:

Հիմք ընդունելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 22 պրիմ 1 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ՎԵՑ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ՄԻԱՁԱՅՆ (ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎՈՂ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ (9) ՁԱՅՆԵՐԻ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ) ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի 2023թ. հունիսի 5-ի նիստի օրակարգը:

4.2 Առցանց քննարկման դրվեց օրակարգի *երկրորդ* հարցը:

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի պահանջներով և հիմք ընդունելով ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կանոնադրության 39-րդ կետի 2-րդ ենթակետը՝

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ՎԵՑ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ՄԻԱՁԱՅՆ (ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎՈՂ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ (9) ՁԱՅՆԵՐԻ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ) ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի 2022 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունը և ի գիտություն ընդունել Աուդիտի դրական եզրակացությունը:

Խորհրդի Նախագահ — Նարեկ Մկրտչյան

Խորհրդի անդամներ՝ — Աննա Ժամակոչյան

Տաթևիկ Ստեփանյան

Դավիթ Խաչատրյան

Ներսես Երիցյան

Ստեփան Ծատուրյան

Արձանագրությունը բաղկացած է 2 (երկու) թերթից, կազմվել է 19 հունիսի, 2023թ.:

Նիստի քարտուղար՝ — Ա.Օհանյան

«ՆՈՐՔ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

05 հունիսի, 2023 թվականի N 89

««ՆՈՐՔ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հիմնադրամի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և ղեկավարվելով հիմնադրամի կանոնադրության 39-րդ կետի 2-րդ ենթակետով.

Ի գիտություն ընդունել Աուդիտի դրական եզրակացությունը և հաստատել ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի 2022 թվականի ֆինանսական հաշվետվությունը՝ համաձայն Հավելված 1-ի:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 27.06.2023 12:50